Կոնվերս բանկի լողացող տոկոսադրույք / ԿԲԼՏ

Սահմանման և հաշվարկման կարգ

Կոնվերս բանկի լողացող տոկոսադրույքով (այսուհետ նաև՝ «ԿԲԼՏ») հաշվարկվող ֆինանսավորման և ավանդային պայմանագրերի անվանական տոկոսադրույքը (այսուհետ՝ «Տոկոսադրույք») սահմանվում է հետևյալ սկզբունքով՝

Տոկոսադրույք = ԿԲԼՏ + Հաստատուն բաղադրիչ

ԿԲԼՏ-ն Բանկում սահմանվում է ըստ հետևյալ արժույթների՝

- ՀՀ դրամ,
- ԱՄՆ դոլար,
- Եվրո:

ԿԲԼՏ հիմքում ընկած ցուցանիշները

- ԿԲԼՏ-ի հիմքում ընկած է մեկ հիմնական ցուցանիշ (այսուհետ՝ «Հիմնական ցուցանիշ») և մեկ երկրորդային ցուցանիշ (այսուհետ՝ «Երկրորդային ցուցանիշ»):

- Ընդ որում, ԿԲԼՏ-ն հաշվարկվում և սահմանվում է՝ հիմք ընդունելով Հիմնական ցուցանիշը, իսկ Հիմնական ցուցանիշի անհասանելիության կամ կիրառման անհնարինության դեպքում ԿԲԼՏ-ն հաշվարկվում և սահմանվում է՝ հիմք ընդունելով Երկրորդային ցուցանիշը:

- Հիմնական ցուցանիշի անհասանելիության կամ կիրառման անհնարինության դեպքում Երկրորդային ցուցանիշի կիրառման անհրաժեշտության առաջացման պարագայում Տոկոսադրույքի հաշվարկում Հաստատուն բաղադրիչը մնում է անփոփոխ:

- Հիմնական և Երկրորդային ցուցանիշների անհասանելիության կամ կիրառման անհնարինության դեպքում հաջորդ ժամանակաշրջանի համար Տոկոսադրույքի հաշվարկում հիմք է ընդունվում ԿԲԼՏ-ի հրապարակված վերջին ցուցանիշը՝ մինչև Բանկի կողմից տոկոսադրույքի հաջորդ հաստատման ժամանակաշրջանը:

Հիմնական ցուցանիշ

ԿԲԼՏ-ի հիմքում որպես Հիմնական ցուցանիշ, կախված ֆինանսավորման արժույթից, ընկած են հետևյալ շուկայական տոկոսադրույքները՝

1. **ՀՀ դրամով** ԿԲԼՏ-ի համար Հիմնական ցուցանիշ (այսուհետ՝ «ՀՀ դրամով հիմնական ցուցանիշ») է համարվում ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնությամբ եկամտաբերությունը:

    - **ՀՀ դրամով հիմնական ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

        - ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքում:

2. **ԱՄՆ դոլարով** ԿԲԼՏ-ի համար Հիմնական ցուցանիշ (այսուհետ՝ «ԱՄՆ դոլարով հիմնական ցուցանիշ») է համարվում ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի միջբանկային առաջարկի տոկոսադրույքը (ICE LIBOR USD 6 Month)[1]:

    - **ԱՄՆ դոլարով հիմնական ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

        - «Intercontinental Exchange (ICE)»-ի պաշտոնական կայքում,
        - «global-rates.com» կայքում,
        - «Bloomberg Terminal»-ում «US0006M» հղմամբ,
        - «Refinitiv Eikon»-ում՝ «USD6MFSR» հղմամբ:

3. **Եվրոյով** ԿԲԼՏ-ի համար Հիմնական ցուցանիշ (այսուհետ՝ «Եվրոյով հիմնական ցուցանիշ») է համարվում Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի միջբանկային առաջարկի տոկոսադրույքը (ICE LIBOR EUR 6 Month)[2]:

    - **Եվրոյով հիմնական ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

        - «Intercontinental Exchange (ICE)»-ի պաշտոնական կայքում,
        - «global-rates.com» կայքում,
        - «Bloomberg Terminal»-ում «EU0006M» հղմամբ,
        - «Refinitiv Eikon»-ում՝ «EUR6MFSR» հղմամբ:

---

[1] ԱՄՆ դոլարով հիմնական ցուցանիշը 30/09/2024թ. ընդհատվել է, ուստի 15/02/2025-ից ԿԲԼՏ սահմանման համար Բանկում հիմք է ընդունվում ԱՄՆ դոլարով երկրորդային ցուցանիշը:

[2] Եվրոյով հիմնական ցուցանիշը 31/12/2021թ. ընդհատվել է, ուստի 15/02/2022-ից ԿԲԼՏ սահմանման համար Բանկում հիմք է ընդունվում Եվրոյով երկրորդային ցուցանիշը:

Երկրորդային ցուցանիշ

ԿԲԼՏ-ի հիմքում որպես Երկրորդային ցուցանիշ, կախված ֆինանսավորման արժույթից, ընկած են հետևյալ շուկայական տոկոսադրույքները՝

1. **ՀՀ դրամով** ԿԲԼՏ-ի համար Երկրորդային ցուցանիշ (այսուհետ՝ «ՀՀ դրամով երկրորդային ցուցանիշ») է համարվում ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ՀՀ դրամով ներգրավված 91-ից 180 օր ժամկետայնությամբ ավանդների միջին կշռված տոկոսադրույքը՝ վերջին հասանելի ամսվա դրությամբ:

    - **ՀՀ դրամով երկրորդային ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

        - ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքում:

2. **ԱՄՆ դոլարով** ԿԲԼՏ-ի համար Երկրորդային ցուցանիշ (այսուհետ՝ «ԱՄՆ դոլարով երկրորդային ցուցանիշ») է համարվում ԱՄՆ ԴՊՀ քաղաքականության արդյունավետ տոկոսադրույքը (Federal Funds Effective Rate /DFF/):

    - **ԱՄՆ դոլարով երկրորդային ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

        - «FRED»-ի պաշտոնական կայքում,
        - «Bloomberg Terminal»-ում՝ «FEDL01» հղմամբ,
        - «Refinitiv Eikon»-ում՝ «FEDFUNDS» հղմամբ:

3. **Եվրոյով** ԿԲԼՏ-ի համար Երկրորդային ցուցանիշ (այսուհետ՝ «Եվրոյով երկրորդային ցուցանիշ») է համարվում Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույքը (EURIBOR 6 Month):

    - **Եվրոյով երկրորդային ցուցանիշի** վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է՝

        - «Euribor»-ի պաշտոնական կայքում,
        - «Bloomberg Terminal»-ում՝ «EUR006M» հղմամբ,
        - «Refinitiv Eikon»-ում՝ «EURIBOR6MD» հղմամբ:

ԿԲԼՏ հաշվարկման ժամանակացույց

- ԿԲԼՏ հաշվարկն իրականացվում է տարեկան 2 անգամ՝ օգոստոսի 15-ին և փետրվարի 15-ին, ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրը՝ հիմք վերցնելով ԿԲԼՏ-ների հաշվարկման հիմքում ընկած վերոնշյալ ցուցանիշների մեծությունները համապատասխանաբար օգոստոսի 15-ի և փետրվարի 15-ի դրությամբ կամ այդ ամսաթվերին նախորդող երեք աշխատանքային օրերից վերջինի դրությամբ:

- Բանկը կարող է այլ ժամկետներում արտահերթ վերանայել ԿԲԼՏ-ները, եթե մասնավորապես՝

    - ՀՀ դրամի ԿԲԼՏ-ն գործողի նկատմամբ փոփոխվում է 2 տոկոսային կետ և ավելի,
    - ԱՄՆ դոլարի և Եվրոյի ԿԲԼՏ-ները գործողների նկատմամբ փոփոխվում են 1 տոկոսային կետ և ավելի:

- Ընդհանուր առմամբ, ԿԲԼՏ-ները չեն կարող փոփոխվել տարեկան ավելի, քան երկու անգամ:

- ԿԲԼՏ-ների փոփոխման դեպքերում նոր ԿԲԼՏ-ներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված ժամկետներում, ընդ որում՝ գործող պայմանագրերի դեպքում իրականացնելով համապատասխան ծանուցումները:

ԿԲԼՏ փոփոխման կարգ

- Եթե տվյալ ժամանակահատվածի համար արձանագրված տոկոսադրույքի և գործող տոկոսադրույքի տարբերությունը մինչև 0.5 տոկոսային կետ է, ապա ԿԲԼՏ-ն չի փոփոխվում:

- Եթե տվյալ ժամանակահատվածի համար արձանագրված տոկոսադրույքի և գործող տոկոսադրույքի տարբերությունը կազմում է 0.5 տոկոսային կետ և ավելի, ապա ԿԲԼՏ-ները ենթակա են Բանկի կողմից փոփոխության ստորակետից հետո երկրորդ նիշի ճշտությամբ, ընդ որում՝ ՀՀ դրամի դեպքում +/-0.5 տոկոսային կետով, ԱՄՆ դոլարի դեպքում՝ առավելագույնը +/-2.0 տոկոսային կետով, իսկ Եվրոյի դեպքում՝ առանց սահմանափակման: Սակայն այս սահմանափակումները չեն տարածվում ժամկետային ավանդների համար սահմանվող տոկոսադրույքների նկատմամբ:

- ԿԲԼՏ-ների մեծությունը կարող է կլորացվել մինչև մեկ հարյուրերորդական: